ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Գիտությունների ակադեմիայի տարեկան ժողովը.— Մարտի 16-ին տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, նվիրված ակադեմիայի 1965 թվականի գործունեության արդյունքներին: Պրեզիդենտ Վ. Համբարձումյանի ներածական խոսքից հետո, զեկուցումով հանդես եկավ ակադեմիկոս-քարտուղար Ս. Մկրտչյանը:

Տարեցտարի ընդլարձակվում են Հայաստանի գիտական կաճառի կապերը արտասահմանյան երկրների գիտական կենտրոնների հետ: Անցած տարվա ընթացքում հայ գիտնականները մասնակցել են Չեխոսլովակիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Ավստրալիայում, Գերմանիայում, Հունգարիայում, Ճապոնիայում, Ավստրիայում, Լեհաստանում և Ռումինիայում հրավիրված գիտական ժողովներին և համագումարներին: Ավելի քան 150 օտարերկրյա գիտնականներ զանազան առիթներով եղել են մեր ակադեմիայում: Մեր ակադեմիայի բնախոսության ինստիտուտը Սովետական Միության 16 գիտական կաճառների թվում առաջնակարգ և ղեկավար դեր է կատարում վիգետատիվ ներվային սիստեմի ուսումնասիրության գործում:

Ժողովի արդյունքները եզրափակեց Վ. Համբարձումյանը: Վերջում տեղի ունեցան ընտրություններ: Ակադեմիայի նախագահության կազմը համալրվեց մի քանի նոր անդամներով:

Գ. Սունդուկյանի անվան թատրոնի նոր շենքը.— Մարտի 19-ին, Գ. Սունդուկյանի անվան Երևանի պետական ակադեմիական թատրոնը վերսկսեց իր ներկայացումները նորակառույց շենքում: Ներկայացվեց Գ. Սունդուկյանի անմահ «Պեպո» կատակերգությունը, որով 45 տարի առաջ նույն թատրոնն սկսեց իր գործունեությունը:

Ինչպես հայտնի է, 4 տարի առաջ թատրոնի շենքն այրվեց պատահական հրդեհից: Սունդուկյանցիները ներկայացումներ էին տալիս քաղաքի մյուս թատերական շենքերում և ակումբներում: Կառավարության որոշմամբ, հրդեհից անմիջապես հետո, հին շենքը հիմնովին քանդվեց և նույն տեղում (26 կոմունարների անվան այգում) սկսվեց թատրոնի նոր շենքի կառուցումը:

Նոր շենքը, որի հեղինակն է երիտասարդ ճարտարապետ Ռազմիկ Ալավերդյանը, բացառիկ հոյակերտ և շքեղ կառուցվածք է արդիական ոճով: Այն կարող է զարդարել աշխարհի որևէ մայրաքաղաքը:

Թատրոնի հանդիսասրահն ունի 1140 տեղ: Լայնարձակ, գեղեցիկ, մարմարապատ ճեմասրահն ունի ձմեռային պարտեզ-ծաղկանոց: Բեմի վարագույրը և ճեմասրահի ճակատային պատը նկարազարդված են ժողովրդական նկարիչ Մ. Սարյանի կողմից: Հանդիսայական բեմն ունի 2 հատ պտտվող հարթակներ: Շքեղորեն հարդարված են դերասանական սենյակները: Փորձերի և ստեղծագործական աշխատանքների համար հատկացված դահլիճներն ու սենյակները հնարավորություն են տալիս միաժամանակ բեմադրության պատրաստել 3—4 ներկայացում:

Պետական համալսարանի 45 տարին.— Լրացավ Երևանի պետական համալսարանի 45 տարին: Այս առթիվ, նորակառույց շենքի մեծ դահլիճում, տեղի ունեցավ հանդես, որին հրավիրված էին նաև նախկին շրջանավարտները:

Համալսարանի անցած ուղու մասին զեկուցեց ռեկտոր Հ. Բատիկյանը: Անցած 45 տարում համալսարանն ավարտել է 16 000 հոգի: Ներկայիս համալսարանն ունի 12 ֆակուլտետ՝ 9 000 ուսանողներով: 9 լաբորատորիաներում աշխատում են ավելի քան 200 գիտական աշխատողներ: Համալսարանը լայն

գիտահետազոտական աշխատանքներ է կատարում ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի, կենսաբանության, հայագիտության և այլ գիտությունների բնագավառներում:

Անցյալի մեկ հատ երեքհարկանի շենքի փոխարեն, ներկայումս համալսարանն ունի շուրջ 15 հսկայական շենքեր: Այս տարի լրիվ կավարտվի գլխավոր ուսումնական շենքը:

Նկարիչ Հ. Ռուխկյանի ցուցահանդեսը.— Երևանի Նկարիչների տանը մարտ ամսվա ընթացքում տեղի ունեցավ հանրապետության վաստակավոր նկարիչ Հրաչյա Ռուխկյանի ստեղծագործությունների ցուցահանդես, որին ներկայացվել էին 200 աշխատություններ:

Հ. Ռուխկյանը Հայաստանի ճանաչված նկարիչներից է, շատ շնորհալի գրաֆիկ և դիմանկարիչ: Նա է հեղինակը Մեսրոպ Մաշտոցի, Սայաթ-Նովայի հանրահայտ դիմանկարների:

Հ. Ռուխկյանը վերին աստիճանի աշխատասեր և որոնող արվեստագետ է: Նա հաճախ է շրջում Հայաստանում՝ դիտելու և վերարտադրելու մեր ժողովրդի կյանքն ու շինարար աշխատանքները: Ահա թե ինչու այնքան բնական ու հաջող է նրա նկարների այն սերիան, որը նվիրված է հիդրոշինարարներին:

Ցուցահանդեսում կան մի ամբողջ շարք հետաքրքրքրական նկարներ, որոնք հեղինակը նկարել է Եգիպտոս, Իրաք և Լիբանան կատարած շրջագայության ժամանակ:

Երևանի զարգացման հեռանկարները.—Ինչպես հայտնի է, 2 ամիս առաջ Սովետական Միության և Հայաստանի պետական շինարարական կոմիտեներն ու մի խումբ մասնագետներ քննության առան և գոհունակությամբ հավանություն տվեցին Երևանի զարգացման գլխավոր հատակագծին, որը կազմել է «Երևան-Նախագիծ» ինստիտուտը:

Վերջերս Հայաստանի Մինիստրների սովետը հաստատեց գլխավոր հատակագծի տեխնիկական-տնտեսական հիմունքները:

Նախատեսվում է, որ մինչև 1970 թվականը Երևանը կունենա 750 000 բնակիչ, իսկ հետագայում՝ մեկ միլիոն: Քաղաքի գրաված տարածությունը կընդարձակվի 9 600 հեկտարով: Գոյություն ունեցող արդյունաբերական ձեռնարկությունների ընդարձակումն ու վերակառուցումը, ինչպես նաև նորերի կառուցումը, պետք է կապված լինեն քաղաքի բնակչության սպասարկման հետ: Արդյունաբերական այլ ճյուղերին պատկանող (տարբեր քան այն, ինչ կա Երևանում) որևէ նոր գործարան կառուցելու դեպքում պետք է ունենալ Մինիստրների սովետի թույլտվությունը:

Քաղաքային սովետին առաջարկված է մինչև սույն տարվա հուլիսի 1-ը ավարտել քաղաքի կենտրոնական մասի կառուցապատման մանրամասն նախագիծը, հաշվի առնելով, որ մոտակա տարիներին պետք է ամբողջովին քանդվեն հին խարխուլ շինությունները:

Բարեփոխվելու և ընդարձակվելու են մայրաքաղաքի էլեկտրական, հեռախոսային, կայուղու, ջրմուղի, գազի մատակարարման ցանցերը, ինչպես նաև երթևեկության միջոցները:

Բարեկարգվում է Լենինականը.—Վերջին տարիներին շինարարական ու բարեկարգման խոշոր աշխատանքներ են կատարվում Լենինականում: Քաղաքի արվարձանների կառուցապատումը հնարավորություն տվեց մեղմացնելու բնակարանային տագնապը և ձեռնամուխ լինելու կենտրոնական մասերի վերակառուցման:

Այժմ կենտրոնական մասերից մեկում, Սայաթ-Նովայի անվան փողոցում, ստեղծվում է մշակութային կենտրոնը: Այստեղ կառուցվում են թատրոն, գրադարան, թանգարան, դպրոցականների տուն, կինոթատրոն և այլն:

Քաղաքի հարավային մասում կենտրոնացվելու են առևտրական հաստատությունները՝ ծածկած շուկան, մեծ վաճառատունը, զանազան խանութներ ու ճաշարաններ: Այս մասում կառուցվելու է նաև նոր հյուրանոց, ինքնաշարժերի միջքաղաքային երթևեկության կայան: Հյուսիսային մասում լինելու են մարզական շենքերը:

Լենինականի արևմտյան մասում լինելու են հանգստի և ժամանցի վայրեր: Նախկին Չերքեզի ձորում ստեղծվելու է զբոսայգի, ուր կկառուցվի նաև մանկական երկաթգիծ: Գյումրի գետակի վրա կառուցվելու է մեծ կամուրջ, որով քաղաքի արևելյան մասից դեպի արևմտյան մասը տանող ճանապարհը կկրճատվի 5 կիլոմետրով:

Նոր բուժավայրեր.—Միայն Ջերմուկն ու Արզնին չեն, որ հայտնի են որպես բուժիչ հանքային ջրեր: Այդպիսի ջրերի հարուստ պաշարներ կան Մարմարիկ գետակի հովտում: Հանքային այդ աղբյուրները հատկապես առատ են հովտի վերին մասում՝ Հանքավան (նախկին Միսխանա) գյուղի մոտերքում: Այդ ջրերը, որոնք շատ օգտակար են հատկապես աղեստամոքսային և երիկամային հիվանդությունների բուժման համար, հետզհետե լայն ճանաչում են գտնում Հայաստանում: Արդեն գոյություն ունի «Հանքավան» ջրերի գործարան և փորձնական մի կոկիկ բուժարան-առողջարան: Գեղատեսիլ անտառոտ հովիտը գլխավորապես օգտագործվում է իբրև ամառանոցային հանգստավայր: Այդ նպատակով կառուցված են գեղեցիկ քարաշեն շենքեր, ուր տեղավորված են մանավանդ դպրոցականների ճամբարները:

Մարմարիկ հովիտը դառնալու է մեծ և բարեկարգ բուժավայր: Այս տարի կսկսվի խոշորագույն առողջարաններից մեկի կառուցումը: Այն կունենա 1 800 մահճակալ և կարող է գործել ամբողջ տարին:

Հետաքրքրական տեղեկություններ նոր հայրենադարձների վերաբերյալ.—Սկսած 1963 թվականից մինչև 1965 թվականի վերջերը, Հայաստան են ներգաղթել 1442 հայ ընտանիքներ, որոնք բոլորը միասին կազմել են 6 100 շունչ: Նրանք ներգաղթել են Իրանից, Սիրիայից, Եգիպտոսից, Կիպրոսից և այլ երկրներից: Մշտական բնակություն են հաստատել գլխավորապես Կիրովականում, Լենինականում, Հրազդանում, Լուսավանում, Աբովյանում և այլ վայ-

րերում: Առաջին իսկ օրից ապահովվել են հարմար բնակարաններով և համապատասխան աշխատանքով: Դպրոց են հաճախում ոչ միայն դպրոցահասակ երեխաները, այլև մեծ թվով մեծահասակներ՝ տիրապետելու համար մայրենի լեզվին: Նորեկներից հարյուր հոգի սովորում են բարձրագույն ուսումնական հաստատություններում: Զգալի թվով երիտասարդներ նոր մասնագիտություններ են ձեռք բերել հայրենիքում:

Նորեկ հայրենադարձներից 500 հոգի պետությունից ստանում են ծերության կենսաթոշակ և 130 բազմազավակ մայրեր՝ պետական նպաստ:

Կինը հասարակական կյանքում.—Ստորև բերում ենք մի քանի հետաքրքրական տվյալներ, թե ինչ դեր են կատարում հայ կանայք հասարակական կյանքում:

Այսպես, օրինակ, Հայաստանում աշխատող 6 000 բժիշկներից 3 200-ը կանայք են: Հանրակրթական բոլոր տեսակի դպրոցներում դասավանդող 27 722 ուսուցիչներից 13 909 հոգի կանայք են:

Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում է շնորհվել 69 կանանց: 96 կանայք Հայաստանի Գերագույն սովետի (պառլամենտի) և 9 կանայք Սովետական Միության Գերագույն սովետի դեպուտատներ են:

1965 թվականին Հայաստանում բազմազավակ մայրերին տրվել է 8 026 800 ռուբլի նպաստ: 1966 թվականին նպաստ են ստանալու 84 900 բազմազավակ մայրեր:

Թղթի գործարան.—Երևանում կառուցվում է թղթի և ստվարաթղթի գործարան, որը տարեկան կտա 14 000 տոննա արտադրանք: Թուղթը և ստվարաթուղթը տրամադրվելու են սննդարդյունաբերության ձեռնարկություններին և առևտրական հաստատություններին: Նոր գործարանի մեքենայական սարքավորումները ստացվելու են Լենինականից:

Ապակու նոր գործարան.—Ներկայումս Հայաստանում գոյություն ունեն ապակու մի քանի գործարաններ, որոնք արտադրում են զանազան շշեր ու տուփեր սննդարդյունաբերության կարիքների համար:

Այժմ Հոկտեմբերյանում կառուցվում է ապակու մի նոր գործարան, որն ամենամեծն է լինելու Հայաստանում: Նա տարեկան կտա 20 000 000 շիշ և 180 000 000 պայմանական տուփ (տուփը կես կիլոգրամի հաշվով):